

ք. Երևան

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս տնօրեն Գարիկ Սողոմոնյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Կատարող») ի դեմս տնօրեն Արմեն Ամիրջանյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում նաև՝ «Կողմեր», կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Կատարողն իրականացնում է ռադիոնետրիկ չափումներ, տրամադրում չափումների արդյունքների վերաբերյալ հաշվետվություն, համաձայն Տեխնիկական առաջադրանքի (Հավելված 1):
- 1.2. Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ կերպով կատարված աշխատանքների արդյունքները և սույն պայմանագրով սահմանված կարգով Կատարողին վճարել պայմանագրային գինը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

- 2.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- 2.2. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը սկսվում է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից և ավարտվում է 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

- 3.1. Սույն պայմանագրով կատարվող աշխատանքների ընդհանուր արժեքը (պայմանագրային գինը) կազմում է 121,536.00 (հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

4. ԶԱՓՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

- 4.1. Զափումների արդյունքները ներկայացվում են հաշվետվության տեսքով:
- 4.2. Կատարողը հաշվետվությունը (մեկ օրինակ) հանձնում է Պատվիրատուին աշխատանքներն ավարտելուց և սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:
- 4.3. Հաշվետվությունը Պատվիրատուին է հանձնվում հանձնման-ընդունման ակտով:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 5.1. Պատվիրատուն իրավունք ունի՝
 - 5.1.1. Հետևել Կատարողի կողմից աշխատանքների կատարմանը:
 - 5.1.2. Թերություններ հայտնաբերելուց պահանջել Կատարողից անհապաղ վերացնել թերությունները:
- 5.2. Պատվիրատուն պարտավոր է՝
 - 5.2.1. Նախքան աշխատանքների կատարումը սկսելը, Կատարողին տրամադրել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տվյալներ և նպաստել աշխատանքների արագ կատարմանը:
 - 5.2.2. Զխոչընդոտել Կատարողի կողմից աշխատանքների կատարմանը:

5.2.3 Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով Կատարողին վճարել պայմանագրի գինը:

5.3. Կատարողն իրավունք ունի՝

5.3.1. Պայմանագրով սահմանված կարգով պահանջել Պատվիրատուից պայմանագրի գինը:

5.3.2. Աշխատանքները պատշաճ կատարելու համար Պատվիրատուից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն:

5.4. Կատարողը պարտավոր է՝

5.4.1. Աշխատանքները կատարելիս ենթարկվել Պատվիրատուի ներքին իրավական ակտերին:

5.4.2. Աշխատանքները կատարելիս իրեն հայտնի դարձած ցանկացած տեղեկատվություն, որը իրեն հայտնի է դարձել ծառայությունների մատուցման ընթացքում, չհրապարակել:

5.4.3. Աշխատանքներն իրականացնել համաձայն սույն Պայմանագրի 1.1 կետում սահմանված չափանիշների:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Պատվիրատուի և Կատարողի միջև առաջացած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

6.2. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

7. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.2. Սույն պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել կամ լրացվել լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով:

7.3. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գարիկ ՄԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ԿԱՏԱՐՈՂ՝

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21

ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4

ՀՎՀՀ 08417304

ՀՎՀՀ 02558849

«ԻՆԵԿՈՐԱՆԿ» ՓԲԸ,

h/h 2052022100061001

Տնօրեն՝

Տնօրեն՝

Գ. Սողոմոնյան

Ա. Ամիրջանյան

(ստորագրություն)

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

Digitally signed by SOGHOMONYAN GARIK
1611790506
Date: 2021.05.18 14:19:39 AMT

Digitally signed by AMIRJANYAN ARMEN
2210610141
Date: 2021.05.14 16:18:59 AMT

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Աշխատանքի անվանումը.

Ռադիոմետրիկ չափումների իրականացում:

2. Աշխատանքի կատարման հիմքը.

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված նամակ, որը կցվում է «Տեխնիկական Առաջադրանք»-ին, որպես բաղկացուցիչ մաս:

3. Աշխատանքի նպատակը.

Ռադիոմետրիկ չափումների կատարում և չափման արդյունքների ներկայացում:

4. Օգտագործվող ռադիոմետրիկ ու դոզիմետրիկ չափիչ սարքերը և սարքավորումները.

- FLUKE 451P - գամմա ճառագայթման չափիչ սարք,
- FLUKE TXT 12000 - ռենտգեն ճառագայթիչների թեստավորման սարք,
- PM 1208 - ազրանշանային անհատական դոզիմետր,
- HARSHAW TLD-100 - թերմոլյումինեսցենտային անհատական դոզիմետր:

5. Աշխատանքի բովանդակությունը.

Ռենտգենյան սարքի տեղադրման սենյակի ճառագայթային պաշտպանության չափումների իրականացում: Մշակել կատարված չափումների հաշվետվություն: Չափումները կատարվում են համաձայն կետ 6-ում նշված մեթոդիկաների:

6. Աշխատանքին ներկայացվող պահանջները.

Աշխատանքները պետք է կատարվեն համաձայն ներքոհիշյալ փաստաթղթերում բերված մեթոդիկաների.

- «Санитарные правила и нормативы, СанПиН 2.6.1.1192-03 «ГИГИЕНИЧЕСКИЕ ТРЕБОВАНИЯ К УСТРОЙСТВУ И ЭКСПЛУАТАЦИИ РЕНТГЕНОВСКИХ КАБИНЕТОВ, АППАРАТОВ И ПРОВЕДЕНИЮ РЕНТГЕНОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ», приложение 11»,
- Կատարողի Որակի ապահովման համակարգի բաղկացուցիչ մաս կազմող «Ռադիոլոգիական չափումների իրականացման ուղեցույց. Բաժին «Ռադիոմետրիկ չափումներ», NRSC-QMS-04-07.2, Երևան 2018:

7. Աշխատանքի արդյունքները.

Աշխատանքի արդյունքները ներկայացվում են հաշվետվության տեսքով:

Հաշվետվությունը պետք է իր մեջ ներառի կատարված ռադիոմետրիկ չափումների արդյունքները, չափման ռեժիմների, չափման կետերի և այդ կետերում ստացված դոզայի հզորության, օգտագործված չափիչ սարքերի և սարքավորումների վերաբերյալ տեղեկատվություն, և եզրակացություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Գ. Սողոմոնյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ

Ա. Ամիրջանյան

Կ.Տ.

Digitally signed by SOGHOMONYAN GARIK
1611790506
Date: 2021.05.18 14:20:41 AMT

Digitally signed by AMIRJANYAN ARMEN 2210610141
Date: 2021.05.14 16:19:16 AMT